ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

14 հոկտեմբերի 2025 թվական, N 165-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-002-0038-0180 ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0.0049 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿՈՎ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասով, 63-րդ հոդվածի 2-րդ մասով, 66-րդ հոդվածի 1-ին կետի 4) մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 612-րդ հոդվածով, 624-րդ հոդվածի 2-րդ կետով և 466-րդ հոդվածի 1-ին կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով, Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան և հիմք ընդունելով Անահիտ Հրաչիկի Ջաղինյանի դիմումը, վարձակալության իրավունքի N 25022025-06-0015 վկայականը, ՄՏ-05032025-06-0550 միասնական տեղեկանքը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համայնքային սեփականություն հանդիսացող, համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաքի Էվոյան փողոց 26 հասցեում գտնվող, կադաստրային քարտեզի 06-002-0038-0180 ծածկագրով, ավտոտնակով ծանրաբեռնված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.0049 հա մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով, 92008 /իննսուներկու հազար ութ/ ՀՀ դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով, օտարել ավտոտնակի սեփականատեր հանդիսացող՝ Անահիտ Հրաչիկի Ջաղինյանին:
2. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Առաջարկել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ Անահիտ Հրաչիկի Ջաղինյանի հետ կնքել հողամասի առք ու վաճառքի պայմանագիր:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Որոշումն ընդունվեց.

			ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.	ԴԱՎԻԹ	ՂՈՒՄԱՇՅԱՆ			
2.	ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ			
3.	ՀԱՄԼԵՏ	ՂՈՒԼՅԱՆ			
4.	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱՎԱՐՅԱՆ			
5.	ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ			
6.	ԴԱՎԻԹ	ՍԱՐԳՍՅԱՆ			
7.	ՀՐԱՆՏ	ՀԱԽՎԵՐԴՅԱՆ			
8.	ԱՆԱՀԻՏ	ՍՄԲԱՏՅԱՆ			
9.	ԱՐՏԱԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ			
10.	ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ			
11.	ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ			
12.	ՆԱՐԻՆԵ	ԹՈՐՈՍՅԱՆ			
13.	ՍԱՄՎԵԼ	ԷԼԲԱԿՅԱՆ			
14.	ԱՐԱՄԱՅԻՍ	ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

2025թ., հոկտեմբերի 14,
Լոռու մարզ, ք. Ալավերդի